ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ - 149

# ԹԲԻԼԻՍԻՆ ՄԵԾԱՐԵՑ ՄԵԾՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԻՆ

## ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՆՇԱՆԱՎՈՐՎԵՑԻՆ «ՇՈՒՆՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ» ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱԽԱՂՈՎ

*Ժողովուրդների միջեւ եղած ազդեցիկ կապերից մեկը Հովհ. Թումանյանը համարում էր գրականությունը. «...Ես երբեք չեմ կասկածել, որ հայն ու վրացին, Վրաստանն ու Հայաստանը ամենալավ հարեւանները պիտի լինեն, ավելի լավ, քան երբեւիցե, եւ նրանց գրականություններն էլ՝ իրանց միջի ամենավսեմ կապը»: Դեռ կենդանության օրոք այդ վսեմ կապն ստեղծող ոսկե օղակներից մեկը լինելով՝ Մեծ Լոռեցին ցայսօր շարունակում է իր վեհ առաքելությունը: Յուրաքանչյուր փետրվարի 19-ին՝ բանաստեղծի ծննդյան օրը, Վրաստանի հայ ու վրացի մտավորականությունն այցելում է Թբիլիսիի հայ գրողների ու հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում հանգչող նրա շիրմին՝ խոնարհվելու հանճարեղ բանաստեղծին, մեծ մտածողին, ազգային եւ հասարակական անվեհեր գործչին:*





Բանաստեղծի 149-րդ տարեդարձը Թբիլիսիում նշվեց սովորականից ավելի շքեղ ու նշանակալից, որին մասնակցեցին Վրաստանի կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ, Հայաստանից հատուկ ժամանած մտավորականների պատվիրակությունը, Վրաստանում Հայաստանի դեսպանության աշխատակիցներ, Վիրահայոց թեմի հոգեւոր դասը, Թբիլիսիի համայնքային կառույցների ղեկավարներ:

Օրը մեկնարկեց Թբիլիսիի հայ գրողների եւ հասարակական գործիչների Խոջիվանքի պանթեոնում: Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը արժեւորեց Թումանյանական օրվա եւ իր ուսանելի դերակատարումով այդ օրը լրացնող, «Գիրք նվիրելու տոնի» հիմնադիր, վիրահայ ճանաչված բանաստեղծ, թարգմանչուհի Անահիտ Բոստանջյանի նախաձեռնության կարեւորությունը: Չխախտելով ավանդույթը՝ բանաստեղծուհու դուստրեր Մարինե Թորոսյանը եւ Գայանե Բոստանջյանը ներկաներին նվիրեցին Անահիտ Բոստանջյանի գրքերից:

Ամենայն Հայոց բանաստեղծի շիրիմը դարձյալ պատվեց ծաղիկներով: Սրբազան Հոր ձեռամբ կատարվեց հոգեհանգստի կարգ:

Այնուհետեւ ներկաները շարժվեցին դեպի Թբիլիսիի «Թումանյանի տուն» գիտա-մշակութային կենտրոն՝ Ամաղլեբա (Համբարձման) փողոցի (նախկինում՝ Դավիթաշվիլի) թիվ 18 շենք: Տանը, ուր բանաստեղծը ապրել, ստեղծագործել եւ անց է կացրել մինչ այդ ստեղծված հայ գրականության պատմության մեջ անդրանիկ՝ «Վերնատուն» գրական խմբակի հավաքները, այսուհետ կբեմադրվեն նաեւ տիկնիկային ներկայացումներ՝ տիկնիկագործ Արմեն Հովհաննիսյանի ղեկավարությամբ:

Հյուրերին դիմավորեց, ողջունեց եւ օրվա խորհրդի առիթով շնորհավորեց «Թումանյանի տան» ղեկավար Գիսանե Հովսեփյանը:

Ապա հաջորդեց բանաստեղծի հանրահայտ ու շատ սիրված «Շունն ու կատուն» բալլադի տիկնիկային ներկայացման առաջնախաղը, որը բեմականացրեց 31-ամյա Արմեն Հովհաննիսյանը՝ Թբիլիսիի Պ. Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի դերասաններ Աշոտ Սիմոնյանի, Արեն Մկրտչյանի, Էդիտա Ջոհրաբյանի համատեղ ջանքերով, որոնց շնորհիվ շունչ ու կենդանություն առան տիկնիկները: Ասենք նաեւ, որ ներկայացումը հագեցած էր գեղեցիկ պարերով եւ ուրախ երաժշտական ձեւավորմամբ:

Ամենայն Հայոց բանաստեղծի 149-ամյակի եւ տիկնիկների հաջողված առաջնախաղի առիթով իրենց խոսքն ասացին Երեւանի Հովհ. Թումանյանի տուն-թանգարանի փոխտնօրեն Անի Եղիազարյանը, Թումանյանի անվան տիկնիկային թատրոնի տնօրեն, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Ռուբեն Բաբայանը, Երեւանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավար Դավիթ Գրիգորյանը, Վրաստանում Հայաստանի դեսպանության մամլո խոսնակ Հարություն Հայրապետյանը, Վրաստանի ԳՄ համանախագահ Մաղվալա Գոնաշվիլին, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, Վրաստանի մշակույթի եւ հուշարձանների պահպանության նախարարության ներկայացուցիչ Ալեքսանդր Գրիգալաշվիլին, Թբիլիսիի Իսանիի մունիցիպալիտետի նախագահ Կախա Լաբուչիձեն, Թբիլիսիի Պ.Ադամյանի անվան պետհայդրամայի թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը:

Բանախոսները օրվա իրադարձությունները արժեւորեցին իբրեւ կարեւոր ձեռքբերում Թումանյանի առաջիկա հոբելյանի՝ 150-ամյակի նախաշեմին:

***ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ***

ՄԵՐ ՄԵԾԵՐԸ

# ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԳԵՐԴԱՍՏԱՆԻ ՀԱՅՐԸ. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴԱՎԹՅԱՆ

Թիֆլիսը տարիներ շարունակ համարվել է հայ գրական ու մշակութային կենտրոն, որտեղ գործել են զանազան գրական, թատերական եւ այլ խմբակներ: Բավական է հիշել Հովհաննես Թումանյանի «Վերնատունը» կամ հայտնի «Հայարտունը»: Դրանք վաղուց են եղել, ես չեմ տեսել, թեեւ ծնվել եւ 25 տարի ապրել եմ նախկին «Հայարտան» շենքում: Փոխարենը տեսել եմ մեկ այլ «Վերնատուն», ոչ պաշտոնական:

... Թբիլիսիի հայաշատ Հավլաբար թաղամասում, հայկական թատրոնից ոչ հեռու, կա մի համեստ բնակարան, որը վաղուց ի վեր դարձել է հայ մտավորականների հանդիպումների, բանավեճերի կամ պարզապես մտերմիկ զրույցների հավաքատեղի: Հայ մտավորականներն այդ բնակարանը նույնպես «Վերնատուն» էին անվանում: Եվ, իրոք, հյուրընկալ այդ օջախը շատ բանով էր հիշեցնում Հովհաննես Թումանյանի նշանավոր «Վերնատունը»: Տանտերը Հովհաննես Դավթյանն էր, հայ-վրացական մշակութային կապերի զարգացման երախտավորներից մեկը, որի ծննդյան 130-ամյակը լրանում է այս օրերին: Հովհաննես Դավթյանը բազմաշնորհ մտավորական էր: Նա հայտնի էր իբրեւ թարգմանիչ, մանկավարժ, լրագրող, երաժշտագետ: Խորհրդային Միության գրողների միության անդամ էր 1934 թվականից, այսինքն՝ այդ միության հիմնադրման տարվանից, արժանացել էր Վրաստանի վաստակավոր ուսուցչի կոչման:

Հովհաննես Դավթյանը ծնվել է 1887 թվականին, Վրաստանի Գորիի գավառի Սուրամի ավանում: Ութ տարեկանում եղել է կոշկակարի աշակերտ, հետո սովորել է տեղի ծխական դպրոցում: Թիֆլիսի Ներսիսյան դպրոցն ավարտելուց հետո (1907), ընդունվել է Պետերբուրգի հոգենյարդաբանական ինստիտուտը: Սակայն նյութական ծանր պայմաններն ստիպում են կիսատ թողնել ուսումը եւ վերադառնալ հայրենիք: 1909 թվականից, շուրջ վաթսուն տարի, Հովհաննես Դավթյանը՝ որպես ուսուցիչ, աշխատել է Արցախի Գետաշեն գյուղում, Վրաստանի Սուրամի, Սաչխերե, Ցխինվալի, Բորժոմի, Թելավի, Սիղնախի բնակավայրերում: Դավթյանը հիմնել է նաեւ բազմաթիվ գրադարան-ընթերցարաններ, հայկական բարեգործական ընկերությունների տեղական մասնաճյուղեր, կազմակերպել շրջիկ թատերախումբ, քառաձայն երգչախումբ, որոնք մեծ ժողովրդականություն էին վայելում: Ասենք, որ Հովհաննես Դավթյանի երաժշտության ուսուցիչները եղել են Մակար Եկմալյանը, Կոմիտասը, Քրիստափոր Կարա-Մուրզան:



Սակայն Դավթյանի գործունեությունը նվիրված է եղել գլխավորապես գրականությանը, որին նա զինվորագրվել էր դեռեւս 1907 թվականից: Նրա հայերեն, վրացերեն եւ ռուսերեն գրված հոդվածները, ակնարկները, հետազոտությունները տպագրվել են «Կայծ», «Մուրճ», «Նոր խոսք», «Պայքար», «Գրական թերթ», «Մնաթոբի», «Արվեստ» եւ բազմաթիվ այլ թերթերում ու հանդեսներում:

Կարեւորագույնը սակայն, Դավթյանի անուրանալի վաստակն է՝ որպես թարգմանիչ: Կատարելապես տիրապետելով հայերենին եւ վրացերենին՝ նա թարգմանություններ է կատարել ինչպես հայերենից վրացերեն, այնպես էլ՝ վրացերենից հայերեն: Վրաց ընթերցողը, նրա բարձրակարգ թարգմանությունների շնորհիվ, ծանոթացել է հայ դասական ու ժամանակակից գրողների, մասնավորապես, Խաչատուր Աբովյանի, Րաֆֆու, Հովհաննես Թումանյանի, Գաբրիել Սունդուկյանի, Ավետիք Իսահակյանի, Ալեքսանդր Շիրվանզադեի, Նար-Դոսի, Ակսել Բակունցի, Ստեփան Զորյանի, Հրաչյա Քոչարի, Սերո Խանզադյանի, Հովհաննես Շիրազի, Համո Սահյանի, Վաղարշակ Նորենցի, Ծերուն Թորգոմյանի, Բենիկ Սեյրանյանի եւ բազմաթիվ այլ գրողների ընտիր երկերին: Եվ փոխադարձաբար, նա հայ ընթերցողին է ներկայացրել Ակակի Ծերեթելու, Իլիա Ճավճավաձեի, Վաժա Փշավելայի, Կոնստանտինե Գամսախուրդիայի, Ակակի Բելիաշվիլու, Ալեքսանդրե Քութաթելու, Իոսեբ Նոնեշվիլու եւ ուրիշների ստեղծագործությունները:

Սերը գրականության, մասնավորապես, գեղարվեստական թարգմանության նկատմամբ անցել է նաեւ նրա զավակներին: Վաղամեռիկ Արտեմ Դավթյանը հոր շնորհակալ գործի արժանավոր շարունակողն էր: Նա է վրացերեն թարգմանել Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանին», Ալեքսանդր Շիրվանզադեի «Արտիստը», Նար-Դոսի «Սեւ փողերի տոկոսը» եւ մի շարք այլ գործեր:

Հայ գրականությունը վրաց ընթերցողին ներկայացնելու պատվաբեր, հայրենասիրական գործին է նվիրվել նաեւ Հովհաննես Դավթյանի մյուս որդին՝ Հրաչիկ (Արչիլ) Դավթյանը: Նրա գրչի արգասիքն են Րաֆֆու «Ոսկի աքաղաղի» եւ Մուրացանի «Նոյի ագռավի» վրացերեն թարգմանությունները: Ահա թե ինչու, Թբիլիսիում Դավթյանների ընտանիքը բոլորն անվանում էին «թարգմանչաց գերդաստան», իսկ Հովհաննես Դավթյանին՝ «թարգմանչաց գերդաստանի հայր»:

Վաստակաշատ մտավորականն իր մահկանացուն կնքեց 1985 թվականին, 98 տարեկան հասակում: Չնայած պատկառելի տարիքին, նա գրիչը վայր չդրեց մինչեւ կյանքի վերջին օրերը: Սա, թերեւս, այն դեպքերից է, երբ ասում են՝ «ծառերը կանգնած են մահանում»: Այո', Հովհաննես Դավթյանը հաստաբուն կաղնու պես կանգնած մեռավ: ...Ես եւս բախտ եմ ունեցել լինել Հովհաննես Դավթյանի «Վերնատանը» տակավին այն ժամանակ, երբ ընդամենը 8-10-րդ դասարանի աշակերտ էի, ապա՝ Թբիլիսիի Ա.Պուշկինի անվան մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետի ուսանող: Առաջին անգամ ինձ այնտեղ տարավ հայրս՝ գրող, հրապարակախոս, գրաքննադատ Կորյուն Ազրոյանը: Մենք գնացել էինք Ստ.Շահումյանի անվան հայկական դրամատիկական թատրոն՝ նոր ներկայացում դիտելու: Ներկայացումից հետո, հայրս առաջարկեց գնալ Դավթյանների տուն՝ «Վերնատուն»: Հենց այդ «Վերնատանն» էլ տեղի ունեցավ ներկայացման քննարկումը: Արդեն այստեղ էին գրող Բենիկ Սեյրանյանը, բանաստեղծ-թարգմանիչ Սուրեն Ավչյանը, պետհայդրամայի դերասաններ Արտեմ Լուսինյանը, Դորի Ամիրբեկյանը, Աշոտ Քաջվորյանը, բանաստեղծ-դերասան Պահարեն: Բնական է՝ նաեւ հայր եւ որդի Դավթյանները: Հիմնական բանախոսը հայրս էր: Ես այնտեղ հասկացա, թե ինչ ասել է «Վերնատուն»: Հայ մտավորականները համախմբվել էին քաղաքի երիցս գրող ու մանկավարժ Հովհաննես Դավթյանի հյուրընկալ հարկի տակ եւ կարծես շարունակում էին Մեծն Լոռեցու «Վերնատան» գործը:

Հետագայում, երբ ես դարձա «Սովետական Վրաստան» թերթի գրական աշխատող, Դավթյանների հարկի տակ ինձ արդեն ընդունում էին ոչ միայն որպես Կորյուն Ազրոյանի որդի, այլեւ «Վերնատան» լիիրավ անդամ: Այս տանը լինում էին Սուրեն Ավչյանը, Բենիկ Սեյրանյանը, Հովհաննես Կարայանը, Աղասի Այվազյանը, հայկական թատրոնի դերասաններ, մանկավարժներ: Հենց Հովհաննես Դավթյանի հորդորանքով, Բենիկ Սեյրանյանը, ով «Սովետական Վրաստան» թերթի արվեստի բաժնի վարիչն էր, ինձ հանձնարարեց գրել Ստ.Շահումյանի անվան թատրոնում բեմադրության պատրաստվող՝ Նոդար Դումբաձեի «Ես տեսնում եմ արեւը» ներկայացման գրախոսությունը: Պետք է ասեմ, որ Բենիկ Սեյրանյանը մինչ այդ ինձ հանձնարարել էր գրել «Զինվորի հայրը» ֆիլմի գրախոսականը, որը տպագրվել էր «Սովետական Վրաստան»-ում: Նույն թվականի դեկտեմբերի 30-ին այդտեղ լույս տեսավ նաեւ իմ գրախոսականը Նոդար Դումբաձեի պիեսի բեմադրության մասին: Այդ օրը, չնայած Ամանորի նախօրյակն էր, Դավթյանների հյուրընկալ հարկի տակ տեղի ունեցավ իմ քննադատական հոդվածի քննարկումը: Հուրախություն խստապահանջ հորս, նրա բոլոր գործընկերները բարձր գնահատական տվեցին իմ հոդվածին: Բայց բոլորը չէ, որ նույն կարծիքի էին: Մասնավորապես, թատրոնի երեւելի դեմքերից մեկը, ում ես քննադատել էի, ինձանից նեղացել էր: Միայն Հովհաննես Դավթյանի միջամտությունից հետո, այդ շնորհալի դերասանը հաշտվեց ինձ հետ:

Կես դարից ավելի է, ինչ Թիֆլիսում չեմ ապրում: Բայց երբեք կապերս չեմ խզել թիֆլիսահայ գրական կյանքի, հատկապես՝ Դավթյանների հետ: Այսօր ես նորից եմ անդրադառնում այդ մեծ մարդուն, համեստ մտավորականին: Առիթը նրա 130-ամյակն է: Այսօր չկան ո'չ հայրս, ո'չ Դավթյանը, ո'չ էլ սույն հոդվածում հիշատակված մյուս գրական-մշակութային գործիչները: Թող որ իմ այս ակնարկը լինի յուրօրինակ ձոն մեր նախնիների, հատկապես՝ մտավորականների հիշատակին, ովքեր երեւելի հետք են թողել հայ գրականության, հայ-վրացական գրական կապերի տարեգրության մեջ:

***ԼԵՎՈՆ ԱԶՐՈՅԱՆ***
*«Արմենպրես»-ի թղթակից*
*Հատուկ «Վրաստանի» համար*

ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ԿԵՆՍԱԿԵՐՊ

## Ո՞ՐՆ Է ՄԱՐԴԿԱՆՑ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ



***Վաղուց մարդկանց հետաքրքրում է, թե ո՞ր բաղադրիչներն են պայմանավորում մարդու կյանքի փեւողությունը: Ոմանք առանձնայնում են գեները, մյուսները խոսում են կենսական պայմանների կարեւորության մասին... Այդ փեսակեփից, ի՞նչ մոփեցում ունի արդի գիփությունը:***

***Վ. ՍԵՐՈԲՅԱՆ***

***Բոլնիսի***

Գիտնականների միջազգային խումբը պարզել է, որ մուտացիաների կուտակումը p62 յուրահատուկ սպիտակուցում, որը կապված է սթրեսից պաշտպանվելու հետ, նպաստել է մարդկանց կյանքի ավելի մեծ տեւողությանը, ի տարբերություն այլ կենդանիների:

Այս մասին հաղորդվում է Phys.org-ի կայքում զետեղված մամուլի տեղեկագրում: Մարդու p62 սպիտակուցն անհրաժեշտ է աուտոֆագիայի մակածման՝ այն գործընթացի համար, որի դեպքում բջջի վնասված բաղադրիչները հեռացվում են դրանից: Դա պահանջվում է հյուսվածքները նորացնելու եւ դրանց վաղաժամ ծերացումը կանխելու համար:

Գիտափորձերը ցույց են տվել, որ ծագումնաբանորեն վերափոխված պտղային ճանճիկները, որոնց p62 գեն են ներարկել (որը դրանց մոտ սկզբնապես բացակայել է), ավելի երկար են գոյատեւել սթրեսի պայմաններում, քան վայրի տիպի միջատները: Դա վկայում է, որ մարդկային սպիտակուցը նպաստել է մարդկանց նախնիների կյանքի երկարացմանը՝ մեծացնելով նրանց կայունությունն անբարենպաստ միջավայրի նկատմամբ: Սակայն p62-ը չի արգելակել ճանճիկների ծերացումը, ինչը վկայում է մարդու մոտ այլ, դեւռես անհայտ կենսաքիմիական մեխանիզմների գոյության մասին:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

## ՀԱՅՏՆԻ ԵՆ «ԱՄԵՆԱԱՆԿՈՒՄԱՅԻՆ» ԵՐԿՐՆԵՐԸ



***Հեփաքրքիր է՝ գլոբալ ուսումնասիրություններ փարվո՞ւմ են, արդյոք, առանձին երկրների փնփեսական իրավիճակի պարզեցման ուղղությամբ, եւ, եթե այո, ապա ո՞ր երկրներն են համարվում փնփեսապես առավել թույլ:***

***Հ. ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ***

***Նինոծմինդա***

Իրոք, նման ուսումնասիրություններ տարվում են: Մասնավորապես, Bloomberg գործակալության վերլուծաբանները վերլուծել են 66 երկրների տնտեսական ցուցանիշները եւ կազմել աշխարհի առավել անկումային եւ ամենաքիչ «անկումային» տնտեսությունների վարկանիշները: Տնտեսությունները գնահատելիս՝ փորձագետները կողմնորոշվել են գնաճի եւ գործազրկության մակարդակով:

Արդեն չորրորդ տարին անընդմեջ, հակավարկանիշը գլխավորում է Վենեսուելայի էկոնոմիկան: Երկրորդ հորիզոնականն զբաղեցրել է Հարավաֆրիկյան Հանրապետությունը, իսկ եռյակը եզրափակել է Արգենտինան: «Անկումայինների» տասնյակ են մտել նաեւ Եգիպտոսը, Հունաստանը, Թուրքիան, Ուկրաինան, Իսպանիան, Բրազիլիան, Սաուդյան Արաբիան:

Ամենաքիչ «դժբախտ» է ճանաչվել Թաիլանդի տնտեսությունը, նրան հետեւում է Սինգապուրը: Երրորդ տեղը բաժանել են Ճապոնիան եւ Շվեյցարիան:

Այնուհետեւ, վարկանիշում տեղ են գտել Թայվանը, Իսրայելը, Իսլանդիան, Նորվեգիան եւ Հարավային Կորեան, տասներորդ հորիզոնականն զբաղեցրել են Դանիան եւ Հոնկոնգը:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

## ԱԶԱՏՎԵԼ ՄԱՐՄՆԻ ՑԱՎԵՐԻՑ՝ ԱՌԱՆՑ ԴԵՂԱՏՈՒՆ ԳՆԱԼՈՒ

Դանիայի գիտնականները հետազոտություն են անցկացրել կամավորների շրջանում, որոնք իրենց սննդակարգի մեջ օգտագործել են կոճապղպեղ՝ իմբիր: Շնորհիվ սննդակարգի փոփոխության, այդ մարդկանց մոտ 63 տոկոսով պակասել են հոդացավերն ու մկանացավերը: Մասնագետները կարծում են, որ պատճառը կոճապղպեղի մեջ պարունակող ուժեղ բաղադրիչներն են, ուստի խորհուրդ են տալիս սննդակարգում ավելացնել 1 թեյի գդալ չորացրած կամ 2 թեյի գդալ ծեծած կոճապղպեղ:

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

## ԱՄՈՒՍՆԱԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

***ԱՄՆ Ֆլորիդայի համալսարանից գիտնականները մշակել են պարզ հոգեբանական թեստ, որը թույլ է տալիս բավականին ստույգ կանխատեսել՝ նորապսակները միմյանց կդավաճանե՞ն, արդյոք, կյանքի առաջին չորս տարում: Այդ մասին ասված է Journal of Personality and Social Psychology հանդեսում հրապարակված հոդվածում:***

«Սոցիալական ցանցերը եւ գլոբալ ցանցը գործնականում անսահման են դարձրել անձնական կամ ընտանեկան կյանք վարելու համար այլընտրանքային զուգընկերներ գտնելու մեր հնարավորությունները: Այդ պատճառով մեզ համար չափազանց կարեւոր է հասկանալ, թե ի՞նչն է տղամարդկանց եւ կանանց մի մասին ստիպում դիմակայել այդ գայթակղությանը, իսկ մյուսներին՝ տրվել դրան»,- հայտարարել է Թալլահասիում (ԱՄՆ) գտնվող Ֆլորիդայի համալսարանի աշխատակից Ջիմ Մաքնալթին:



Ինչպես նշում է Մաքնալթին, այսօրինակ հետազոտություն անցկացնելու գաղափարն իր թիմի մոտ հայտնվել է այն բանից հետո, երբ ինքն ուշադրություն է դարձրել ԱՄՆ-ում ամուսնալուծությունների ահագնացող վիճակագրությանը. հոգեբանի խոսքով, այսօր յուրաքանչյուր երկրորդ ընտանեկան զույգ բաժանվում է ամուսնությունից մի քանի տարի անց:

Փորձելով հասկանալ, թե ինչո՞ւ է դա տեղի ունենում, Մաքնալթին եւ նրա գործընկերները հավաքել են երեք հարյուր տղաներից ու աղջիկներից բաղկացած խումբ, որոնք վերջերս ամուսիններ են դարձել. նրանց կյանքին գիտնականները հետեւել են հետագա 3,5 տարիների ընթացքում:

Այդ ժամանակաընթացքում զույգերի մի մասը հասցրել է բաժանվել, իսկ մյուսները լարված հարաբերությունների մեջ էին դավաճանությունների պատճառով, ինչը գիտնականներին թույլ է տվել հասկանալ, թե կենսաբանական եւ հոգեբանական որ գործոններն են բացասաբար ազդում ընտանեկան կապերի ամրության վրա: Ինչպես պարզվել է, նրանց բաժանության հավանականությունը կախված էր մեկ ոչ ակնհայտ, բայց շատ հասարակ բանից, նրանից, թե ե'ւ տղաներին, ե'ւ աղջիկներին որքան ուժեղ են հրապուրել անծանոթ մարդկանց համակրելի դեմքերը: Օրինակ, այն նորապսակները, որոնք երկար են նայել գրավիչ տղամարդկանց ու կանանց լուսանկարները, որոնք նրանց ցույց են տվել գիտնականները, զգալիորեն ավելի հաճախ են իրենց հարաբերությունները խզել հետագա տարիներին, քան այն ընտանեկան զույգերը, որոնք այդ ընթացակարգի վրա ավելի քիչ ժամանակ են ծախսել:

Համանման միտումները դրսեւորվել են անծանոթ մարդկանց գեղեցկության սուբյեկտիվ գնահատման մեջ. որքան քիչ են նորապսակներին գեղեցիկ թվացել այդ լուսանկարները, այնքան հազվադեպ են նրանք դավաճանել միմյանց: Արժագանքների նույնիսկ ոչ մեծ տարբերությունները, ինչպես նշում են հոգեբանները, շատ ուժեղ են ազդել ընտանեկան կապերի ամրության վրա՝ նրանց բաժանության հավանականությունը մեծացնելով կամ նվազեցնելով մի քանի տասնյակ տոկոսով: Ինչպես ընդգծում է Մաքնալթին, այսօրինակ տարբերությունները կամավորների մեղքով չեն հայտնվել. դրանք, ինչպես կարծում են գիտնականները, մարդու ուղեղի եւ մարմնի այլ մասերի աշխատանքի կենսաբանական ինչ-ինչ տարբերությունների հետեւանք են: Այլ կերպ ասած, սկզբունքորեն անկարելի է «գիտակցաբար» բարձրացնել դավաճանության կամ ամուսնալուծության հավանականությունը կամ էլ նվազեցնել այն:

«Մարդիկ միշտ չէ, որ հասկանում են, թե ինչ են անում իրենք եւ ինչու են դա անում: Նմանօրինակ գործընթացները մարդուց ջանքերի ներդրում չեն պահանջում եւ տեղի են ունենում ինքնաբերաբար, իսկ դրանց վրա կարող է ազդել կենսաբանությունը կամ մանկական ինչ-ինչ բարդույթներ ու տպավորություններ»,- բացատրում է հոգեբանը:

Չնայած այդ խնդիրներն ուղղելու անհնարինությանը, այդօրինակ գիտելիքները, ինչպես կարծում է Մաքնալթին, հոգեբաններին կարող են օգնել ճիշտ ռազմավարություն ընտրել ընտանեկան դժվարությունների դեմ պայքարելու հարցում, որոնք սովորաբար ունենում են իրենց հաճախորդները:

ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Անցյալի պատմությունը մի լուսատու լապտեր է, որ ամեն մի ժողովուրդ պետք է ունենա իր ճամփեն անմոլոր գնալու համար:

***ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ***
***(1869-1923)***
***Ամենայն հայոց բանաստեղծ***

Ագահությունը մարդուն կարող է կործանել:

***ՍՈՒԼԽԱՆ-ՍԱԲԱ ՕՐԲԵԼԻԱՆԻ***
***(1658-1724)***
***Վրաց գրող***

Մարդը միակ կենդանին է, որ կարմրում է:

***ՄԱՐԿ ՏՎԵՆ***
***(1835-1910)***
***Ամերիկացի գրող***

Իմաստուն մարդը տարիք է առնում, բայց չի ծերանում:

***ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈ***
***(1802-1885)***
***Ֆրանսիացի բանաստեղծ***

Ոտըդ զգույշ դիր հողին, Ո՞վ իմանա որ սիրունի Բիբն ես կոխում դու հիմի:

***ՕՄԱՐ ԽԱՅԱՄ***
***(1048-1131)***
***Պարսիկ բանաստեղծ***

Անգասուններից ավելի անխելք են նրանք, ովքեր ծարավը հագեցնում են ոչ թե ջրով, այլ՝ գինով:

***ՍՈԿՐԱՏԵՍ***
***(մ.թ.ա. 469-մ.թ.ա.399)***
***Հին հույն փիլիսոփա***

ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ Շերլոկ Հոմսը եւ Ուաթսոնը օդապարիկով հայտնվում են անծանոթ վայրում: Հոմսը անցորդներից մեկին հարցնում է.*

*- Որտե՞ղ ենք մենք գտնվում:*

*Անցորդը մի փոքր մտածելուց հետո պատասխանում է.*

*- Դուք գտնվում եք օդապարիկում:*

*- Այս մաթեմատիկոսներից ոչինչ իմանալ հնարավոր չէ:*

*- Ինչպե՞ս իմացաք, որ մաթեմատիկոս էր:*

*- Նախ մտածեց, նոր պատասխանեց, ապա հայտնեց մեր գտնվելու ճշգրիտ տեղը, եւ երրորդ՝ նրա ասածը բոլորովին օգտակար չէր:*

*☺ Ճանապարհին կանգնած հետիոտնը բարձրացնում է ձեռքը՝ կանգնեցնելով հանրընթաց մեքենան:*

*- Մինչեւ Ապարան շատ հեռու՞ է:*

*- Չէ', հեռու չէ:*

*- Ինձ կտանե՞ք Ձեզ հետ:*

*- Նստեք:*

*Մի ժամ անցնելուց հետո:*

*- Բա ասում էիք հեռու չէ՞:*

*- Ա՜յ, հիմա հեռու է:*

*☺ Երիտասարդը՝ քահանային.*

*- Տեր Հայր, Ալմաստն արդեն երրորդ աղջիկն է, որ մերժում է ինձ:*

*- Հրաշալի է, որդի'ս, բայց մի' կարծիր, թե բախտդ միշտ այդպես բերելու է:*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ՝ ՄՅՈՒՆԽԵՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հայաստանի կողմից տարվող արտաքին քաղաքականությանը, ինտեգրման գործընթացների շրջանակներում Հայաստանի արդյունավետ փոխգործակցությանը ԵԱՏՄ-ի եւ ԵՄ-ի հետ, անվտանգության տեսանկյունից տարածաշրջանի խնդիրներին եւ մարտահրավերներին, այդ համատեքստում՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդությամբ Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման բանակցային գործընթացին ու դրա առաջընթացին իր ապակառուցողական քաղաքականությամբ խոչընդոտող Ադրբեջանի իշխանությունների քայլերին: Հայաստանի նախագահը խոսեց նաեւ Եվրոպայի անվտանգության եւ համագործակցության կազմակերպության շրջանակում ստանձնած ու բանակցված հանձնառությունների մասին՝ ընդգծելով, որ դեռեւս նախորդ դարի 70-ական թվականներին սկիզբ առած Հելսինկյան գործընթացի նպատակը Եվրոպայում անվտանգության ու համագործակցության ամրապնդումն էր, եւ նշեց, որ Հելսինկիի եզրափակիչ փաստաթղթի տասը սկզբունքները մեկ միասնական ընդհանրություն են, եւ դրանցից որեւէ մեկը չպետք է տարանջատվի կամ հակադրվի մյուսներին:

Ելույթից հետո Սերժ Սարգսյանը Մյունխենի անվտանգության համաժողովում պատասխանեց քննարկման մասնակիցներին հետաքրքրող հարցերին:

## ՀԱՅ-ԼԻԲԱՆԱՆՅԱՆ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԵՎԱՆՈՒՄ



*Փետրվարի 22-ին պաշտոնական այցով Երեւանում էր գտնվում Լիբանանի նախագահ Միշել Աունը: Նախագահի պատվիրակության կազմում են Լիբանանի ներքին գործերի նախարար Նուհադ ալ-Մաշնուքը, արդյունաբերության նախարար Հուսեյն Հաջ Հասանը, զբոսաշրջության նախարար Ավետիս Կեդանյանը, ինչպես նաեւ Լիբանանում «Դաշնակցություն» կուսակցության ղեկավար Հակոբ Բագրատունին:*

Հայաստանի նախագահի նստավայրում տեղի ունեցած Լիբանանի նախագահի դիմավորման պաշտոնական արարողությունից հետո, կայացավ երկու երկրների նախագահներ Սերժ Սարգսյանի եւ Միշել Աունի առանձնազրույցը, որին հաջորդեցին ընդլայնված կազմով հայ-լիբանանյան բարձր մակարդակի բանակցություններ երկու երկրների պատվիրակությունների մասնակցությամբ:

Լիբանանի եւ Հայաստանի նախագահները բանակցությունների արդյունքներն ամփոփեցին զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների առջեւ հայտարարություններով:

Պաշտոնական այցով Հայաստանում գտնվող Լիբանանի Հանրապետության նախագահ Միշել Աունը հանդիպումներ ունեցավ նաեւ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արա Բաբլոյանի, վարչապետ Կարեն Կարապետյանի հետ:

Այցի շրջանակներում, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում նախագահ Միշել Աունը հանդիպում ունեցավ Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ, այնուհետեւ այցելեց Մայր Տաճար եւ գանձատուն:

## ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆԻՍՏԸ

***Փետրվարի 20-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը նախագահական նստավայրում հյուրընկալեց Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու կառավարման բարձրագույն մարմնի՝ Գերագույն հոգեւոր խորհրդի (ԳՀԽ) անդամներին, ովքեր փետրվարի 20-23-ը մասնակցում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում գումարվող ԳՀԽ նիստին: Հանդիպմանը մասնակցում էր նաեւ Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:***

Բարձրաստիճան հոգեւորական եւ աշխարհական 24 անդամներից կազմված խորհրդի նախագահը Ամենայն Հայոց կաթողիկոսն է, ատենապետերը՝ Երուսաղեմի եւ Կ.Պոլսի Հայոց պատրիարքները:

Թեյի սեղանի շուրջ Սերժ Սարգսյանը հանդիպման մասնակիցների հետ քննարկեց համազգային հարցեր, պատասխանեց նաեւ Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներին հետաքրքրող հարցերին:

Նշենք, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի, փետրվարի 20-ին աշխատանքն սկսեց Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը՝ ընդլայնված կազմով:

Օրակարգում ընդգրկված են համազգային եւ ներեկեղեցական մի շարք հարցեր: Մասնավորաբար, քննարկվեցին Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքությանն առնչվող խնդիրներ, Հայ եկեղեցու կառավարման արդյունավետության, Հայաստանի առաջին Հանրապետության եւ Մայիսյան հերոսամարտերի 100-րդ տարեդարձի տոնախմբման, երիտասարդների շրջանում քարոզչական առաքելության զորացման մասին նյութեր:

## ՀԱՅԱՍՏԱՆ - ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ. ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

***Աշխատանքային այցով Բրյուսելում գտնվող Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը փետրվարի 21-ին հանդիպում է ունեցել Եվրամիության արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ, Եվրոպական հանձնաժողովի փոխնախագահ Ֆեդերիկա Մոգերինիի հետ:***



Զրուցակիցներն անդրադարձել են Հայաստան-ԵՄ համապարփակ եւ ընդլայնված գործընկերության համաձայնագրի՝ Հայաստանի կողմից վավերացումից հետո փաստաթղթի մի շարք դրույթների իրականացմանը:

Հանդիպմանը հանգամանալից քննարկվել են Հայաստան-Եվրամիություն համագործակցությանը առնչվող հարցեր, մտքեր են փոխանակվել միջազգային եւ տարածաշրջանային հրատապ խնդիրների շուրջ:

Հանդիպման ավարտին Էդվարդ Նալբանդյանն ու Ֆեդերիկա Մոգերինին՝ որպես Հայաստան-ԵՄ համագործակցության խորհրդի համանախագահներ, ստորագրել են Հայաստան-Եվրամիություն գործընկերության առաջնահերթությունների իրագործման մասին փաստաթուղթը:



## ԳԻՐՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՕՐԸ՝ ՍԻՐՎԱԾ ԱՎԱՆԴՈՒՅԹ

*Գրականությունը, գիրքը մեր մտերիմներն են, սրտակից ընկերը, հարազատն ու բարեկամը: Այն նորանոր հորիզոններ է բացում մեր առաջ, հնարավորություն տալիս ճանաչել աշխարհը, մարդկային բարդ ու խճճված հարաբերությունները, սովորեցնում է սիրել, երազել, պայքարել: Գրքի նկատմամբ հետաքրքրությունն ու սերը մեծացնելու համար, հայ մեծ բանաստեղծ Հովհ. Թումանյանի ծննդյան օրը՝ փետրվարի 19-ը, Հայաստանում նշվում է որպես «Գիրք նվիրելու օր»:*

Տոնը Հայաստանում արմատավորվել է Գրողների միության երջանկահիշատակ նախագահ Լեւոն Անանյանի նախաձեռնությամբ, 2008 թվականին:

Գիրք նվիրելը Հայաստանում արդեն սիրված ավանդույթ է դառնում:

Հայաստանի մշակույթի նախարարությունը եւ Գրողների միությունը, Հայաստանի կառավարության որոշման համաձայն, յուրաքանչյուր տարի Գիրք նվիրելու օրը պետական պատվերով եւ աջակցությամբ հրատարակված եւ չվաճառված գրքերը բաշխում են մարզային եւ համայնքային, ինչպես նաեւ Արցախի եւ Սփյուռքում գործող գրադարանների միջեւ:

Գիրք նվիրելու օրվա հետ համընկավ նաեւ Մանկապատանեկան գրքի երեւանյան 14-րդ տոնավաճառը, որը գրքի հանրահռչակմանը նպաստող հրաշալի նախաձեռնություն է: Միջոցառմանը մասնակցեցին Հայաստանի մի շարք հրատարակիչներ: Տոնավաճառի պաշտոնական բացման հանդիսավոր արարողությունը տեղի ունեցավ մեծանուն գրող Հովհ. Թումանյանի ծննդյան օրը՝ փետրվարի 19-ին:

## ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐԸ ՃԱՆԱՉԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

**Նիդերլանդների խորհրդարանը քվեարկության արդյունքներով, չայների բացարձակ մեծամասնությամբ, ընդունեց երկրի կոալիցիոն կառավարության մեջ մտնող «Քրիստոնեական միություն» կուսակցության անդամ Ջոել Ֆորդեւինդի ներկայացրած Հայոց ցեղասպանության երկու բանաձեւերը:**

**Բանաձեւերի քվեարկություններին կողմ հանդես եկան գրեթե բոլոր խմբակցությունները. դեմ քվեարկեց միայն փոքրաթիվ խմբակցություններից մեկը, որի երեք անդամներն էլ ազգությամբ թուրք են: Բանաձեւերն ընդունվեցին 142 կողմ ձայնով:**

**Առաջին բանաձեւով վերահաստատվում է Նիդերլանդների կողմից 2004 թվականին Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին որոշումը, իսկ երկրորդով պարտադրվելու է կառավարությանը նախարարի մակարդակով, հինգ տարին մեկ՝ ապրիլի 24-ին, այցելել եւ հարգանքի տուրք մատուցել Ծիծեռնակաբերդում:**

### ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀՀԿ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ

***Փետրվարի 16-ին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հանդիպեց Հայաստանի Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) կողմից Հայաստանի նախագահի թեկնածու առաջադրված Արմեն Սարգսյանի հետ: Նա, Ազգային ժողովում մեծամասնություն կազմող քաղաքական ուժի առաջարկի վերաբերյալ որոշում կայացնելուց առաջ, Հայաստանի նախագահի հետ նախորդ հանդիպմանը ժամանակ էր խնդրել, որպեսզի հանդիպումներ ունենա քաղաքական տարբեր ուժերի, հանրության լայն շրջանակները ներկայացնող գիտական, մտավորական, հասարակական, բարեգործական կազմակերպությունների, գործարար եւ աշխատավորական շրջանակների ներկայացուցիչների, Արցախի ղեկավարության եւ սփյուռքահայությունը ներկայացնող կառույցների, կազմակերպությունների ու անհատների հետ:***

***Հանդիպմանը Արմեն Սարգսյանը նշեց, որ նախատեսված հանդիպումներն ավարտել է եւ, դրանց արդյունքում, կայացրել իր որոշումը:***

### ԳՐԱՆՑՎԵԼ Է ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԳԱԼԻ ԱՃ

***Հայաստանի տնտեսական ակտիվության ցուցանիշը 2018 թվականի հունվարին 10,2 տոկոսով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության տվյալներով, անկում է գրանցվել միայն գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալներում:***

***Ընթացիկ տարվա առաջին ամսվա ցուցանիշներով, շինարարության ոլորտում աճը կազմել է 19,7, էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում՝ 7 տոկոս: Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը նվազել է 0,4 տոկոսով:***

***Սպառողական գների ինդեքսը ընթացիկ տարվա հունվարին ավելացել է 2,7, իսկ արդյունաբերական արտադրանքի գների ինդեքսը՝ 5,2 տոկոսով:***

***Առեւտրի շրջանառությունն ավելացել է 17,3, արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ 13,9 տոկոսով:***

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

## ՓԵՏՐՎԱՐ - ՄԱՐՏ



*24.02.2018. Սուրբ Կյուրեղ Երուսաղեմի Հայրապետի, Կյուրեղ եպիսկոպոսի եւ նրա մոր՝ Աննայի հիշատակության օր*

*25.02.2018. Անառակի կիրակի*

*3.03.2018. Սրբոցն Երուսաղեմի Հովհան Հայրապետի, հայոց Հովհաննես Օձնեցի Հայրապետի, Հովհան Որոտնեցի եւ Գրիգոր Տաթեւացի վարդապետների հիշատակության օր*

## ԲՈԼՈՐԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐ

Շտապ բժշկական օգնություն - 112
Պարեկային ոստիկանություն - 112
Հրշեջ-փրկարար ծառայություն - 112
Հրշեջ-փրկարար օպերատիվ ծառայություն - 01, 011, 275-20-85, 241-17-71, 241-17-72
Պահպանության ոստիկանություն - 125
Գլխավոր տեսչություն - 126
Տեղեկատվական բյուրո - 118 08
Քաղաքապետարանի թեժ գիծ - 272-22-22
Առողջապահության նախարարության թեժ գիծ - 294-49-11
Ժողովրդական պաշտպան - 299-58-98, 292-24-79
Մարդու իրավունքների պաշտպանության կենտրոն - 237-69-50
«ՂազՏրանսԳազ»-ի տեղեկատվական ծառայություն - 231-04-04
«Վարկեթիլաիրի»-ի տեղեկատվական ծառայություն - 227-50-40
Գազի վթարային ծառայություն - 04, 274-86-27, 274-89-04
ԹԵԼԱՍԻ-ի տեղեկատվական կենտրոն - 25-52, 225-52-11
ԹԵԼԱՍԻ-ի թեժ գիծ - 277-99-99, 227-44-11
Ջրամատակարարման թեժ գիծ - 293-11-11
Կոյուղու վթարային ծառայության թեժ գիծ - 293-11-11
Օդանավակայանի տեղեկատվական բյուրո - 231-04-21
Երկաթուղային կայարան - 256-35-66, 256-47-60
Դիդուբեի «Օկրիբա» ավտոկայարան - 234-26-92
Նավթլուղիի ավտոկայարան - 274-83-03, 274-63-23

ՓՀԵՆՉՀԱՆ - 2018

## ՎՐԱՑ ԵՎ ՀԱՅ ՕԼԻՄՊԻԱԿԱՆՆԵՐԸ ԱՎԱՐՏԵՑԻՆ ԻՐԵՆՑ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ

*Հարավկորեական Փհենչհան քաղաքի 23-րդ ձմեռային Օլիմպիական խաղերում Վրաստանը եւ Հայաստանը ներկայացնող մարզիկ-մարզուհիներն ավարտեցին իրենց ելույթները:*



Մորիս Կվիտելաշվիլի | Գիորգի Սողոյան | Նինո Ծիկլաուրի | Յասոն Աբրամիշվիլի

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի հավաքականի անդամ, բակուրիանցի սահնորդ Գիորգի Սողոյանը, իր մարզաձեւում զբաղեցրեց 32-րդ տեղը, լեռնադահուկորդ Նինո Ծիկլաուրին, գերազանցելով անձնական ծեռքբերումը, զբաղեցրեց 46-րդ տեղը, լեռնադահուկորդ Յասոն Աբրամիշվիլին իր ելույթն ավարտեց՝ զբաղեցնելով 28-րդ տեղը, իսկ Մորիս Կվիտելաշվիլին գեղասահորդների մրցաշարում կարողացավ զբաղեցնել 24-րդ տեղը:

Ցավոք, անհաջող հանդես եկան Հայաստանի մարզիկները: Դահուկորդներ Միքայել Միքայելյանը, Կատյա Գալստյանը եւ լեռնադահուկորդ Աշոտ Կարապետյանը չկարողացան հաղթահարել որակավորման փուլը:

Նշենք, որ փետրվարի 23-ի դրությամբ մեդալների աղյուսակը՝ 35 մեդալով, գլխավորում են նորվեգացիները: Նրանք իրենց ակտիվում ունեն 13 ոսկե, 12 արծաթե, 10 բրոնզե մեդալներ: Երկրորդ տեղում՝ դարձյալ 13 ոսկե մեդալով, Գերմանիան է, նրանք ունեն նաեւ 7 արծաթե եւ 5 բրոնզե մեդալ (25), իսկ եռյակի վերջում՝ 27 մեդալով, Կանադան է՝ 10 ոսկի, 8 արծաթ եւ 9 բրոնզ:

Օլիմպիական դրոշի ներքո հանես եկող Ռուսաստանի թիմը 1 ոսկե, 5 արծաթե եւ 8 բրոնզե մեդալներով զբաղեցնում է 15-րդ հորիզոնականը:

Հիշեցնենք, որ Օլիմպիական խաղերի 16 օրերի ընթացքում խաղարկվում են մեդալների 102 հավաքածու՝ 15 մարզաձեւերում: «Սպիտակ խաղերի» պատմության մեջ առաջին անգամ է, որ խաղարկվում է մեդալների 100-ից ավելի հավաքածու:

Խաղերի փակման պաշտոնական արարողությունը կկայանա փետրվարի 25-ին:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ԶԳՈՒՇԱՑԵ՛Ք. ԿԱՐՄՐՈՒԿԸ ԳՐՈՀՈՒՄ Է



Վրաստանի Հիվանդությունների վերահսկողության եւ հանրային առողջության ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամղրելիձեն հայտարարել է, որ երկրում համաճարակաբանական բռնկում է, եւ «կարմրուկը գրոհում է մեզ վրա»: Այդ մասին հայտնել է Imedi հեռուստաընկերությունը:

Վերջին տվյալներով, Վրաստանում արձանագրվել է 268 դեպք: Հիվանդների շուրջ 70 տոկոսը գրանցվել է Աջարիայում: Միայն վերջին շաբաթվա ընթացքում այստեղ 48 նոր դեպք է գրանցվել:

- 65-70 տոկոսը կենտրոնացված է հենց Աջարիայում, թեեւ թիվը աճում է նաեւ Թբիլիսիում,- հայտարարել է Գամղրելիձեն:

Կենտրոնի ղեկավարը բնակչությանը հորդորել է պատվաստումներ անել կարմրուկի դեմ:

Կարմրուկն ամենավարակիչ հիվանդություններից մեկն է, որը փոխանցվում է օդակաթիլային ճանապարհով:



Մառնեուլիի մունիցիպալիտետի Կարմիր գյուղի հանրային դպրոցը, «Վրաստան» թերթի խմբագրությունը, Պետրոս Ադամյանի անվան պետական հայկական դրամատիկական թատրոնը խորապես ցավակցում են Մինաս, Վարդան եւ Հմայակ Սայադյաններին, նրանց սիրելի մոր՝

***Սվետլանա Հմայակի ՍԱՅԱԴՅԱՆԻ***

մահվան կապակցությամբ:

## ԽԱՉԲԱՌ



***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Նոյի որդիներից: 5.Առաջին «Ֆիզիկա» դասագրքի հեղինակը Մխիթարյան Միաբանությունից՝ ... Միրիջանյան: 10.«... գերի եղիր, անգետին սիրելի մի եղիր» (ժող. թեւավոր խոսք): 11.Գետ Հայաստանում: 13.Խոտի բլուրը: 14.Բնապատեղծության տեսակ: 18.Ճանաչված դերասան ... Դեղտրիկյան: 19.Նար-Դոսի որդու անունը: 21.Աստվածաշնչյան առաջին զոհը: 24.Խխունջի պատյանը: 25.Պետություն Օվկիանիայում: 27.Մատաղ, նահատակ, մարտիրոս: 29.Երեք հրացանակիրներից: 30.Վրաստանի արդարադատության նախարար ... Ծուլուկիանի: 33.«Սիրուն թիթեռ, ինձ ...» (մանկ. ժող. երգ): 34.Տատիկի «ճախարակը»: 36.Կղզի Ամերիկայում ... Երկիր: 37.Երրորդ նոտան: 38.Կատվազգի գազան: 41.Ապակյա տարա: 42.Ռեստորան Թբիլիսիում: 44.Հայկական ճաշատեսակ: 46.Գաճաճ պետություն Եվրոպայում: 49.Ընտանի կենդանի: 50.Թբիլիսահայ գրող ... Խանջյան: 51.Համո Սահյանի ծննդավայր գյուղը: 52.Ստորադասական շաղկապ: 53.Այս պետության մայրաքաղաքը Դոհան է: 56.... ու համերաշխ: 57.Լծկան անասուն: 58.Քաղաք Թուրքմենստանում: 59.Պետություն Ասիայում: 60. Քաղաք Հունաստանում:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Թռչուն: 3.Չոր, ոչ անձրեւային եղանակ: 4.Հերոսուհի Ա.Սեկոյանի «Գարունը ծյան տակ» ստեղծագործության մեջ: 5.Վրաց երգիչ, դերասան Վախթանգ Կիկաբիձեի կեղծանունը: 6.Ժխտական նախածանց: 7.Պետություն Աֆրիկայում: 8.Պատմիչ ... Փարպեցի: 9.Քաղաք Լեհաստանում: 12.«Ես եւ ...» Նար-Դոսի ստեղծագործությունը: 15.Ուսուցչապետ, վարպետ ուսուցիչ: 16.Թագավորություն հին Վրաստանում: 17.Ծովափնյա քաղաք Ֆրանսիայում: 20.Դրական պատասխան: 22.Տողադարձի նշանը: 23.Պետություն Հնդկաչին թերակղզում: 26.Իսլամիստական «Ալ քաիդա» ահաբեկչական խմբի նախկին ղեկավար ... բեն Լադեն: 27.Հայ Մոպասան, նորավեպի իշխան, թուրքական խորհրդարանի մեպուս, Մեծ եղեռնի զոհ: 28.Կղզի Միջերկրական ծովում: 31.Ոչ տեղացի, ոչ բնիկ: 32.Բերդ-ամրոց Ախալցիխեում: 35.Զամբիայի մայրաքաղաքը: 39.Մակերեսի չափման միավոր: 40.Մազերի, վարսերի հյուսքերը: 43.Աղքատ, ընչազուրկ: 45.Հայոց թագավոր: 46.Գլխի հետ կապված հիվանդություն: 47.Իզուր, ապարդյուն: 48.Քաղաք Հայաստանում: 50.Կոմպոզիտոր Է.Միրզոյանի ծննդավայր քաղաքը Վրաստանում: 51.Անմահ, անբնակ, խոպան: 55.... ու բեր:

***Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ***

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Ասպատակ: 9.Սիրած: 10.Բասկ: 11.Բելգրադ: 13.Եզնիկ: 16.Լոռ: 17.Թիմ: 19.Անխեթ: 22.Աչքիս: 24.Ինգմար: 25.Միկա: 27.Հաղպատ: 29.Ապարոշ: 32.Ակվարել: 33.Զիբրով: 35.Աղոտ: 37.Կուտ: 39.Ուղերձ: 40.Մթիկ: 43.Նաեւ: 44.Վասո: 47.Ասր: 49.Սիրող: 50.Եվրո: 53.Վերեւ: 54.Ուղտ: 55.Աղել: 57.ԷՀՄ: 58.Երզնկա:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Հսկել: 2.Տանգո: 3.Ռաբաթ: 4.Ոսկե: 5.Կրոն: 6.Կծիկ: 8.Կադիս: 12.Լոնք: 14.Զինգ: 15.Իդեա: 18.Ասիա: 19.Անոպա: 20.Խմորեղեն: 21.Թրաշ: 23.Իմպորտ: 26.Կտավ: 28.Անիկ: 29.Ավո: 30.Արաղ: 31.Ոլորան: 34.Բուքսիր: 36.Տձեւ: 38.Սիս: 41.Թաղում: 42.Կրետե: 45.Ասեղ: 46.Որեւէ: 48.Արազ: 51.Ողն: 52.Հլա: 56.Եկ:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445